M A-S I S

N° 14

ՄԱ- ՍԻՍ

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, Jenvier – Mai 2013

ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, Հունվար – Մայիս 2013

ANOUCHE : UNE HISTOIRE QUI N’A PAS PRIS LA MOINDRE RIDE

La nouvelle d’une présentation du célèbre opéra arménien *Anouche* au Théâtre des Amandiers de Nanterre nous a tous agréablement surpris. Ce n’est pas tous les jours qu’une œuvre aussi célèbre et emblématique pour les Arméniens se produit sur le sol français. Très vite un groupe désireux de voir ou de revoir ce bestseller de l’art classique national des temps impérial, soviétique et moderne s’est constitué. J’avoue qu’au début, le fait qu’il s’agissait d’une nouvelle version de l’opéra d’Armen Tigranian, adaptée et mise en scène par Serge Avédikian, n’a pas spécialement attiré mon attention. Ce qui comptait c’était l’évènement lui-même. Mais très vite les échos très controversés de la première, présentée à Erevan quelques jours avant l’arrivée du spectacle en France, ont commencé à nourrir ma curiosité. *La Lettre ouverte des intellectuels arméniens au Président de la République* était un tournant inattendu et surprenant. Les auteurs demandaient tout simplement l’interdiction de l’exportation du spectacle à l’étranger. Cette réaction a été un rappel plus que puissant d’une époque que l’Arménie moderne assure, sans l’avoir oubliée, vouloir enterrer définitivement. Le contenu de la *Lettre ouverte* ne mérite vraiment pas qu’on s’y attarde mais elle est, à mes yeux, ce signe pathognomonique témoignant que le poème *Anouche* de H. Toumanian, pourtant datant du début du 20^e^ siècle, est une histoire qui n’a pas pris une ride.

Photo : Garik Galstyan

Le metteur en scène de l’*Anouche* Serge Avedikian
«Անուշ»ի բեմադրիչ Սերժ Ավետիքյանը

C’est dans ce contexte (porté tout d’abord par l’importance de l’évènement culturel) que notre groupe a pris le bus pour Paris afin d’assister à ce spectacle. Nous étions 32. Notre plus jeune spectatrice était la petite Inès à peine âgée de 11 mois pour qui l’*Anouche* allait être son premier spectacle. Le voyage fut très gai et convivial. La proposition faite par Haïk de lire l’œuvre littéraire à haute voix n’a enthousiasmé personne : on n’allait pas vivre la même tragédie deux fois, surtout un dimanche. Alors Garik, très entreprenant comme d’habitude, a voulu partager avec nous les DVDs « savamment » choisis par ses

«ԱՆՈՒՇ». ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՉԻ ՀՆԱՆՈՒՄ

Նանթերի «Նշենիների թատրոնում» հանրահանաչ հայկական «Անուշ» օպերայի ներկայացման լուրը մեզ հաճելիորեն զարմացրեց: Ամեն օր չէ, որ հայերիս համար այս ճանաչված և խորհրդանշական ստեղծագործությունը բեմ է բարձրանում Ֆրանսիայի հողի վրա: Շատ կարճ ժամանակահատվածում կայսերական, խորհրդային և արդի ժամանակաշրջանների մեր ազգային դասական արվեստի այս գլուխգործոցը նայելու և վերանայելու համար ձևավորվեց ցանկացողների մի խումբ: Հաշվի առնելով այն փաստը, որ խոսքն Արմեն Տիգրանյանի օպերայի նոր տարբերակի մասին էր, որը մշակել և բեմադրել էր Սերժ Ավետիքյանը, խոստովանեմ, որ սկզբում այն չէր գրավել իմ ուշադրությունը: Ամենակարևորը բուն իրադարձությունն էր: Սակայն, բավական շուտ, երևանյան պրեմիերայի, որը տեղի էր ունեցել ներկայացման Ֆրանսիա գալուց մի քանի օր առաջ, շատ իրարամերժ արձագանքները սկսեցին սնուցել իմ հետաքրքրությունը: «Հայ մտավորականների բաց նամակը Հանրապետության նախագահին» անսպասելի և անակնկալ շրջադարձ էր: Հեղինակները պարզապես պահանջում էին արգելել ներկայացման արտահանումն արտերկիր: Այս արձագանքն ավելի քան զորեղ անդրադարձ էր մի ժամանակաշրջանի, որն արդի Հայաստանը վստահեցնում է, թե ցանկանում է թաղել վերջնականապես՝ առանց այն մոռանալու: «Բաց նամակ»ի բովանդակությունն արժանի չէ, որ հանգամանալից ներկայացնենք, բայց, իմ կարծիքով, այս «հիվանդությանը» բնորոշ նշանը վկայում է, որ Հ. Թումանյանի «Անուշ» պոեմը՝ գրված 20-րդ դարի սկզբին, մի պատմություն է, որը չի հնանում:



soins pour distraire ses « pèlerins ». Mais malgré leur contenu, pas toujours au goût de tous, ces DVDs, notamment, celui sur le *pop folk* art arménien du début de la 3e République, ont largement contribué à l'ambiance car même l'ennuyeux peut sembler drôle si l'état d'esprit du groupe l'est.

Et le spectacle… Il faut d'abord dire que cette présentation est faite dans un théâtre et pas dans un opéra comme on pouvait s'y attendre. Mais très vite on comprend que c'est voulu. Il n'y a pas de fosse, les musiciens se trouvent sur la scène, derrière une toile semi transparente. Ils ne sont pas très nombreux, une quinzaine à peine. On y entre très doucement dans cette *Anouche*. L'arrangement et la réorchestration sont très différents de la version « habituelle », on est plus dans l'univers de la musique de chambre. On y voit d'ailleurs l'apparition de certains instruments traditionnels assez bien intégrés dans l'ensemble. Ce n'est pas une *Anouche* qui d'emblée remplit pleinement vos oreilles comme cette puissante ouverture de la version « classique » où il suffit de fermer les yeux pour voir les paysages montagneux de l'Arménie. Mais on n'est pas du tout dépaysé car les solutions apportées sont efficaces. La scène, les lumières sont à la fois modernes et intimistes comme l'est la musique. Un pont transparent et convexe en plexiglas symbolise très efficacement les routes sinueuses des montagnes de Lori. Cette ambiance est appuyée par un écran géant sur lequel tout au long du spectacle sont projetés les images du paysage aussi sauvage que beau de l'Arménie transmettant très soigneusement l'omniprésence de la nature dans l'œuvre du poète. Et l'ensemble est sous-titré en français pour ceux qui ne comprendraient pas les paroles des airs. Cette ambiance intimiste est confirmée par le nombre restreint d'acteurs présents sur la scène. On est très loin de l'*Anouche* que l'on connaît mais, comme le souligne le metteur en scène, on est certainement plus proche de la première version de Tigranian de 1912 présentée à Alexandropol avec des acteurs amateurs. L'histoire est racontée de manière nuancée et subtile, tout en douceur comme le suppose le prénom de notre héroïne. Les émotions, le sens de la tragédie, la souffrance sont au rendez-vous mais très finement dosés, sans exagération dramatique. Il y a probablement une volonté du metteur en scène de laisser aux spectateurs entrevoir le fond de l'histoire avec ses implications psychologiques parfaitement transposables à notre époque. Les quatre danseurs qui survolent le spectacle allient la danse moderne et traditionnelle en faisant le lien entre différentes scènes du spectacle. Ils transmettent très bien ce quelque chose d'éphémère et d'à peine palpable dont le poème est imbibé. On a parfois envie que ces danseurs soient plus nombreux lors de certaines scènes mais ce n'est qu'un détail. En ce qui concerne les costumes, on n'est pas dans les costumes traditionnels à proprement parler mais les éléments traditionnels se marient parfaitement avec le moderne.

Photo : http://www.ambafrance-am.org

S. Avedikian présente le projet d'opéra *Anouche*, en présence de l'Am-bassadeur de France Ս. Ավետիքյանը ներկայացնում է «Անուշ» օպերայի նախագիծը՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանի ներկայությամբ

Ահա այս համատեքստում էր, որ մեր խումբը՝ կարևորելով առաջին հերթին մշակութային իրադարձությունը, ավտոբուսով մեկնեց Փարիզ՝ ներկայացումը դիտելու: Մենք երեսուներկու հոգի էինք: Մեր ամենաերիտասարդ հանդիսատեսը դեռ տասնմեկ ամիսը չլրացած փոքրիկ Ինեսն էր, ում համար «Անուշ»ը պիտի լիներ առաջին ներկայացումը: Ճանապարհորդությունն անցավ շատ ուրախ և ընկերական մթնոլորտում: Հայկի արած առաջարկությունը՝ բարձրաձայն կարդալ այս գեղարվեստական երկը, ոչ մեկին չխանդավառեց. նույն ողբերգությունը պետք չէր երկու անգամ վերապրել, այն էլ՝ կիրակի օրը: Այդ ժամանակ, ինչպես միշտ, նախաձեռնող Գարիկը ցանկացավ ներկաների ուշադրությանը հրամցնել իր «բանիմացորեն» ընտրած DVD-ները, որոնք մեզ՝ «ուխտագնացներիս», պետք է զվարճացնեին: Բայց չնայած սրանց բովանդակությանը, որը ոչ միշտ էր համապատասխանում բոլորիս ճաշակին, այդ DVDները, մանավանդ Հայաստանի Հանրապետության ձևավորման տարիների՝ 90-ականների հայկական *pop folk* արվեստին նվիրված, լայնորեն նպաստեցին ջերմ մթնոլորտի ձևավորմանը, քանզի անգամ ձանձրալին կարող է թվալ զվարճալի, եթե այդպիսին է խմբի տրամադրվածությունը:

Իսկ ներկայացո՞ւմը… Նախ և առաջ հարկավոր է ասել, որ այս բեմադրությունը կատարվել է թատրոնում և ոչ թե օպերայում, ինչպես կարելի էր ակնկալել: Բայց շատ շուտով հասկանում ես, որ դա արվել է մտածված ձևով: Չկա նվագախմբի փոսը, երաժիշտները գտնվում են բեմի վրա՝ կիսաթափանցիկ պաստառի հետևում: Նրանք շատ չեն, հազիվ տասնհինգ հոգի: Շատ հանդարտորեն ես մտնում այս «Անուշ»ի մեջ: Երաժշտական մշակումն ու նորովի գործիքավորումը շատ են տարբերվում ավանդական քաջածանոթ տարբերակից. ավելի շատ գտնվում ես կամերային երաժշտության աշխարհում: Ի դեպ, այստեղ կարելի էր տեսնել հայկական երաժշտական նվագարանների հայտնվելը, որոնք բավական լավ էին համադրված ընդհանուրի մեջ: Դա այն «Անուշ»ը չէ, որն անմիջապես լիովին լցնում է ձեր ականջները, ինչպես դասական տարբերակի հզոր նախերգանքը, որի ընթացքում բավական է փակեք ձեր աչքերը, որպեսզի տեսնեք Հայաստանի լեռնային բնաշխարհը: Սակայն դա չի ապակողմնորոշում, քանի որ առաջարկված լուծումներն արդյունավետ են: Երաժշտության նման բեմն ու լույսերը արդիական են և մտերմիկ: Կոր և թափանցիկ ապակենման պլաստմասսե կամուրջը բավական արդյունավետորեն խորհրդանշում է Լոռվա լեռների ոլոր-մոլոր ճանապարհները: Այս միջավայրը լրացնում է մի հսկա էկրան, որի վրա ամբողջ ներկայացման ընթացքում ցուցադրվում էին Հայաստանի և՛ վայրի, և՛ գեղեցիկ բնապատկերներ՝ մեծ հոգատարությամբ փոխանցելով բանաստեղծի ստեղծագործությունում բնության մշտական ներկայությունը: Իսկ այն հանդիսատեսների համար, ովքեր չէին հասկանում դերերգերի բառերը, ամբողջ ներկայացումը ենթագրված էր ֆրանսերենով: Այս մտերմիկ միջավայրը շեշտվում է բեմի վրա ներկա սակավաթիվ դերակատարներով: Մենք շատ ենք հեռու մեր ճանաչած «Անուշ»ից, բայց, ինչպես ընդգծում է բեմադրիչը, անկասկած ավելի մոտ ենք գտնվում Ա. Տիգրանյանի 1912 թ. Ալեքսանդրոպոլում սիրող դերակատարներով ներկայացված տարբերակին: Այս պատմությունը հաղորդվում է խորաթափանց և նրբերանգ ձևով, ամենայն քնքշու-

L’interprète d’Anouche (Sophia Sayadian – soprano) est fidèle à la logique et à l’esthétisme du spectacle – tendre, douce et tragique à juste mesure. Les deux principaux héros Saro (Liparit Avetisian – ténor) et Mossy (Gourgen Baveian – baryton) avec une virilité et une sensualité bien dosées mettent en lumière la place des hommes dans ce monde rural. Il est à noter la très touchante prestation de la mère de Saro (Lilit Soghomonian – soprano) pleurant sur le corps de son fils. Le final est comme le reste, dans l’esprit de l’œuvre originale, Anouche disparaissant derrière cet écran géant montrant les images du Débet, le dernier refuge de la belle.

Photo : Pierre Grosbois

Les quatre danseurs qui survolent le spectacle allient la danse moderne et traditionnelle… Բեմի վրա ճախրող չորս պարողները միաձուլում են ժամանակակից և ազգային պարը…

On a assisté à une *Anouche* pas comme les autres – un mélange de théâtre, d’opéra, et même de cinéma. Une *Anouche* intime, avec un peu plus de Toumanian. Et là réside probablement le point de discorde. Ceux qui espéraient voir une nouvelle version de l’*Anouche* de Tigranian des temps soviétiques, si célèbre et emblématique, seront certainement déçus. La manière dont ils expriment cette déception n’est pas notre sujet. Mais l’orientation que voulait donner Serge Avédikian à cette *Anouche* est visible. De prime abord vous pouvez avoir l’impression que la musique et la mise en scène sont moins « riches » et ne correspondent pas à ce que l’on a l’habitude d’appeler « l’opéra ». L’*Anouche* « classique » est une adaptation pour l’époque soviétique (signée Tigranian). Elle a été réalisée 20 ans après la création de l’œuvre dans le but de la présenter comme un « opéra » avec ses propres règles, ce qu’explique très bien Avédikian. La version de ce dernier qu’on pourrait baptiser de « *moderne mais plus fidèle à l'original* » ramène l’œuvre de Tigranian à un certain niveau d’équilibre, très différent de l’*Anouche* « classique » soviétique. Dans cet équilibre, le poème de Toumanian prend une autre place. Mais cela ne diminue en rien le talent ou le génie de Tigranian qui, lui aussi, voyait cette *Anouche* de manière plus intimiste, où la musique est en fusion discrète mais complète – en toile de fond – avec l’œuvre littéraire. Il est fort possible qu’il y a un siècle de ça Tigranian voyait l’*Anouche* sous un angle qui est assez proche de celui d’Avédikian. N’est-ce pas un argument qui valorise davantage son œuvre toujours reprise et son talent de compositeur ? D’autant plus que l’*Anouche* de Tigranian a su « évoluer », selon l’époque, vers cet opéra tant aimé et populaire. En ce sens, les deux *Anouches*, l’*Anouche* « classique » et habituellement représentée et l’*Anouche* « moderne mais plus fidèle », se complètent et ont le droit de coexister paisiblement.

Photo : Pierre Grosbois

Un pont transparent et convexe en plexiglas symbolise les routes sinueuses des montagnes de Lori. Կոր և թափանցիկ ապակենման պլաստմասսե կամուրջը խորհրդանշում է Լոռվա լեռների ոլոր-մոլոր ճանապարհները

թյամբ, ինչը ենթադրում է նաև մեր հերոսուհու անունը: Հուզմունքը, ողբերգության իմաստն ու վիշտն առկա են, բայց նրբորեն չափավորված և առանց դրամատիկական ուռճացման: Հավանաբար, բեմադրիչի նպատակն է օգնել հանդիսատեսին կանխազգալ պատմության ենթատեքստն իր բոլոր հոգեբանական նրբերանգներով, որոնք ամբողջովին կիրառելի են մեր ժամանակներում: Բեմի վրա ճախրող չորս պարողները միաձուլում են ժամանակակից և ազգային պարը՝ կապ պահպանելով ներկայացման տարբեր տեսարանների միջև: Նրանք վարպետորեն փոխանցում են այդ վաղանցիկն ու համարյա թե անշոշափելին, ինչով հագեցած է պոեմը: Երբեմն ցանկանում ես, որ որոշ տեսարաններում պարողների թիվն ավելի շատ լինի, բայց դա միայն մանրուք է: Ինչ վերաբերում է հագուստներին, ապա այստեղ չեք տեսնի բուն ազգային տարազներ. ավանդական տարրերը կատարելապես համադրված են արդիականի հետ:

Photo : http://www.armstar.am

Anouche sur la scène du théâtre dramatique Soundoukian à Erevan
«Անուշ»-ը Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի բեմում

Անուշի դերակատարը (Սոֆյա Սայադյան՝ սոպրանո) հավատարիմ է ներկայացման տրամաբանությանն ու գեղագիտությանը՝ ճիշտ չափի մեջ զգայուն, քնքուշ և ողբերգական: Երկու գլխավոր հերոսները՝ Սարոն (Լիպարիտ Ավետիսյան՝ տենոր) և Մոսին (Գուրգեն Բավեյան՝ բարիտոն) շատ չափավորված առնականությամբ ու զգացումնային ներկայացնում են տղամարդկանց տեղը գյուղական միջավայրում: Հարկավոր է ընդգծել նաև որդու դիակի վրա ողբացող Սարոյի մոր (Լիլիթ Սողոմոնյան՝ սոպրանո) շատ սրտառուչ դերակատարումը: Ինչպես և մնացած մասերը, վերջաբանն էլ է բնագրին համահունչ. Անուշն անհետանում է այդ մեծ էկրանի հետևում, որի վրա ցուցադրվում են գեղեցկուհու համար վերջին ապաստան դարձած Դեբեդի պատկերները:

Մենք դիտեցինք մի «Անուշ», որը նման չէր մյուսներին: Դա թատրոնի, օպերայի և անգամ կինոյի խառնուրդ էր: Դա ինտիմ «Անուշ» էր, մի քիչ ավելի «թումանյանական»: Հավանաբար ահա այստեղ է գտնվում հիմնական տարաձայնությունը: Նրանք, ովքեր հույս ունեին տեսնել խորհրդային ժամանակների Տիգրանյանի հանրաճանաչ և խորհրդանշական «Անուշ»ի մի նոր տարբերակը, անկասկած հիասթափված կլինեն: Թե ինչպե՞ս են նրանք արտահայտում իրենց հիասթափությունը, դա մեր թեմայից դուրս է: Սակայն այստեղ նկատելի է այն կողմնորոշումը, որը Սերժ Ավետիքյանը ցանկացել է տալ այս «Անուշ»ին: Առաջին հայացքից կարելի է ունենալ այն տպավորությունը, որ երաժշտությունն ու բեմադրությունը շատ «հարուստ» չեն և չեն համապատասխանում այն ժանրին, որը սովորաբար անվանում են «օպերա»: «Դասական» «Անուշ»ը մի մշակում է՝ կատարված խորհրդային ժամանակաշրջանում՝ Տիգրանյանի հեղինակությամբ: Այն իրականացվել է ստեղծագործության ստեղծումից քսան տարի հետո՝ հետևելով նպատակ այն ներկայացնելու որպես «օպերա»՝ իրեն յուրահատուկ կանոններով, որը շատ լավ բացատրում է Սերժ Ավետիքյանը: Նրա տարբերակը, որը կարելի է անվանել «ժամանակակից, բայց բնագրին ավելի հավատարիմ», Տիգրանյանի ստեղծագործությանը տալիս է որոշակի հավասարակշռություն, որը շատ է

Sur le chemin du retour, la tradition oblige, un verre est levé : « Paix à l'âme d'Anouche et de Saro. Que des drames semblables surviennent de moins en moins dans le monde ». On rit… Mais derrière ce rire des questions surgissent : pourquoi l'*Anouche* de Toumanian peut et doit encore nous parler aujourd'hui et avoir une signification ? Nul ne doute qu'il s'agit d'une œuvre universelle qui illustre si bien cette perpétuelle confrontation entre la modernité et les traditions ancestrales, le besoin de changement et en même temps, aussi paradoxale que cela puisse paraître, le besoin de traditions. Mais il s'agit de traditions dont le rôle ne serait pas de devenir une pierre tombale pour les aspirations des nouvelles générations mais, au contraire, qui resteraient cette terre fertile et propice où prendrait racine la modernité. Et l'Arménie moderne dans tout ça ? L'est-elle vraiment ? A-t-elle beaucoup changé ? Toumanian, entre les lignes, comme d'ailleurs cette *Anouche* « moderne, plus fidèle et plus vieille », ont mis le doigt sur un point primordial. L'Arménie moderne, connectée, informée et informatisée, très tolérante à la diversité, consciente et désireuse des valeurs dites occidentales a-t-elle vraiment pris le chemin de changements profonds ? Ou n'y a-t-il qu'un effet de façade à l'image de ce jeu de lutte qui n'en est pas vraiment un, car il ne doit pas y avoir de vainqueur ou de vaincu même en jouant. Celui qui, même porté par l'innocence de ses sentiments, transgressera les règles de ce « jeu qui n'en est pas un », ne va pas échapper à la suite des évènements tragiques mais justifiés du point du vu ancestral. L'union entre deux êtres est-elle basée uniquement sur l'amour réciproque de nos jours en Arménie ? Ou bien l'amour reste tout de même plus probable et souhaitable entre les gens de la même couche sociale? La perméabilité est-elle vraiment sans obstacles entre les divers pôles de la société ? Tant de questions qui restent actuelles comme l'histoire de notre Saro national qui n'a même pas envisagé la voie classique de l'union entre deux êtres aimants. Il a tout de suite imaginé un stratagème d'enlèvement qui n'en est pas un non plus. Et au milieu de ces évènements entre les deux camps arrive le moment, à mon sens le plus crucial, le plus révélateur et à juste titre ressuscité par Avédikian – la scène du prêtre du village. Car si Anouche par son retour opte justement pour cette articulation entre le moderne et le traditionnel, le seul homme qui lui tend la main n'est ni son père ni le chef du village, c'est le représentant de l'église. Cette église qui elle aussi est gardienne des traditions. Mais l'unique phrase prononcée par ce personnage, une phrase pleine d'espoir et de bon sens, reste immédiatement en suspens par la nouvelle de la mort de Saro. Or, il y avait une voie de sortie plus qu'honorable : le prêtre proposait de valider cette union à la seule et unique condition qu'il y ait de l'amour réciproque : la modernité restait articulée avec la tradition. Hélas, même la réponse n'a pas eu le temps de sortir de la bouche d'Anouche. Pourquoi cette main tendue est incarnée par le prêtre ? À mes yeux, il y a au moins deux causes. L'une est plus universelle en rapport même avec la philosophie du christianisme. On ne parle pas de l'église mais de cette philosophie de l'amour qu'est cette religion que l'on soit croyant ou pas, chrétien ou pas, et qui, par principe, ne peut pas s'opposer à l'amour. La deuxième est plus « nationale » : H. Toumanian veut souligner le rôle social de l'Église en tant qu'institution que lui prête tout un peuple. Cette confiance est sans doute justifiée par l'histoire. Et H. Toumanian sur les trois piliers de la société arménienne – la famille (gardienne par excellence des traditions), le pouvoir politique et l'Église – mise plutôt (et peut être critique aussi par la même occasion) sur la dernière. L'*Anouche* est vraiment une histoire qui n'a pas pris une ride avec une différence de taille tout de même : on ne voit pas de nos jours lequel des piliers pourrait être source d'espoir. Le pouvoir actuel peine à se moderniser par crainte de perdre les rênes du pouvoir, ce qui reporte au second plan le service des intérêts de la nation. Quel est le

Photo : Nelli Papanyan
Après le spectacle : un groupe d'Arméniennes de Lille
Ներկայացումից հետո. Լիլի հայուհիների մի խումբ

տարբերվում խորհրդային «դասական» «Անուշ»-ից: Եվ այս հավասարակշռության մեջ Թումանյանի պոեմը զբաղեցնում է մեկ այլ տեղ: Սակայն այս ամենը ոչնչով չի նվազեցնում Տիգրանյանի տաղանդը կամ հանճարը, ով ինքն էլ էր պատկերացրել «Անուշ»ն ավելի ինտիմ, որտեղ երաժշտությունը զուսպ, բայց ամբողջապես միաձուլված է գրական երկի հետ, որպես ենթակուլիսային պաստառ: Շատ հավանական է, որ մեկ դար առաջ Տիգրանյանը պատկերացրել է «Անուշ»ն այնպիսի անկյան տակ, որը բավական մոտ է Ավետիքյանի պատկերացմանը: Սա, արդյոք, ևս մեկ ապացույց չէ՞, որն արժևորում է նրա միշտ բեմադրվող ստեղծագործությունն ու երգահանի տաղանդը: Հատկապես, որ Տիգրանյանի «Անուշ»ին, ըստ ժամանակաշրջանի, հաջողվել է «աստիճանաբար զարգանալ» և դառնալ այսքան սիրելի և հանրաճանաչ օպերա: Այս իմաստով երկու «Անուշ»ները՝ «դասական»ն ու սովորաբար ներկայացվողը և «ժամանակակից»ը, բայց և բնագրին ավելի հավատարիմը, միմյանց լրացնում են և իրավունք ունեն համերաշխորեն գոյակցելու:

Վերադարձի ճանապարհին, ըստ ավանդության, հայավարի բաժակ բարձրացրինք. «Խաղաղություն Անուշի և Սարոյի հոգիներին: Թո՜ղ որ նմանատիպ ողբերգություններ աշխարհում ավելի ու ավելի քիչ տեղի ունենան»: Եվ ծիծաղում ենք… Սակայն այս ծիծաղի տակ բացահայտվում են որոշ հարցեր: Ինչո՞ւ Թումանյանի «Անուշ»ն այսօր կարող է և պետք է դեռ տակավին մեզ հետ խոսի և ունենա ասելիք: Ոչ ոք կասկածի տակ չի դնում այն փաստը, որ խոսքը համամարդկային մի ստեղծագործության մասին է, որն այսքան լավ պատկերում է մշտական առճակատումն այժմեականության և նահապետական ավանդույթների, վերափոխումների և, միևնույն ժամանակ, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, ավանդույթների պահանջի միջև: Բայց խոսքը ավանդույթների մասին է, որոնք չպետք է նոր սերունդների ձգտումների համար դառնան գերեզմանաքար, այլ ընդհակառակը, այնպիսի սովորույթների մասին, որոնք կմնան այն արգավանդ և բարենպաստ հողում, որում արմատներ կձգի այժմեականությունը: Իսկ ո՞րն է ժամանակակից Հայաստանի դերն այս ամեն ինչում: Արդյոք նա արդիակա՞ն է: Նա շա՞տ է փոխվել: Տողերի արանքից Թումանյանը, ինչպես, իմիջիայլոց, այս «ժամանակակից, ավելի հավատարիմ և ավելի հին» «Անուշ»-ը, մատնացույց են արել մի կարևորագույն խնդիր: Կապակցված, ինֆորմացված և ինֆորմատիզացված, բազմազանության նկատմամբ շատ հանդուրժողական, այսպես կոչված արևմտյան արժեքների կարիքը զգացող և փափագող ժամանակակից Հայաստանը կանգնե՞լ է իսկապես արմատական վերափոխումների ճանապարհին: Թե՞ կա միայն ջանքի պատրանք, ինչպես այդ ըմբշամարտի խաղն էր, որն իրականում այդքան էլ մարտի նման չէր, քանի որ չպետք է լինեին հաղթողներ և պարտվողներ, անգամ խաղալիս: Եթե մեկը, ով նույնիսկ տարված իր զգացմունքների պարզությամբ, կխախտի այս «խաղի, որն այնքան էլ խաղի նման չէ», կանոնները, չի խուսափի ողբերգական իրադարձությունների հետևանքներից, որոնք, սակայն, արդարացված են ադաթի տեսանկյունից: Այսօրվա Հայաստանում երկու մարդ էակների միջև միությունը հիմնվա՞ծ է, արդյոք, միայն փոխադարձ սիրո վրա: Կամ էլ սերը դեռ շարունակո՞ւմ է մնալ ավելի հավանական և ցանկալի նույն սոցիալական խավի մարդկանց միջև: Անխոչընդո՞տ է, արդյոք, անցողականությունը հասարակության տարբեր բևեռների միջև: Շատ հարցեր են մնում այժմեական, ինչպես մեր ազգային Սարոյի պատմությունը, ով անգամ չմտածեց անցնել երկու սիրող էակների միջև միության դասական ճանապարհով: Նա միանգամից պատկերացրեց առևանգման տարբերակը, որը հնարավոր չէր: Եվ այս երկու ճամբարների միջև տեղի ունեցող իրադարձությունների կենտրոնում գալիս է, իմ կարծիքով, ամենավճռական, ամենաբացահայտիչ պահը, որին իրավացիորեն հարություն է տվել Ս. Ավետիքյանը. դա գյուղի քահանայի մասնակցությամբ տեսարանն է: Եթե Անուշն իր վերադարձից հետո ընտրում է արդիականի և ավանդականի միջև այս փոխկապակցումը, միակ մարդը, ով նրան ձեռք է մեկնում, ո՛չ իր հայրն է, ո՛չ էլ գյուղապետը, այլ եկեղեցու ներկայացուցիչը: Այդ նույն եկեղեցու, որը ևս ավանդույթների պահապանն է: Բայց միակ նախադասությունը, որ հնչեցնում է այս գործող անձը, մի ար-

cap de l'église d'aujourd'hui, est-elle à l'image de ce pouvoir politique dont elle est proche ? Le devenir de la famille traditionnelle avec ses valeurs sécu-laires dans le monde globalisé reste incertain.

Ainsi cette *Anouche* «moderne et plus fidèle» à ses deux auteurs (H. Toumanian et A. Tigranian) semble encore plus actuelle que lors de sa création. Ce point de vue est déjà suffisant pour applaudir son arrivée. Serge Avédikian montre assez subtilement cette actualité et, en ce sens, c'est déjà une réussite.

Vahé Mournet

Photo : Nelli Papanyan

Le groupe d'Arméniens de Lille devant le Théâtre des Amandiers de Nanterre
Լիլահայերի խումբը Նանտերի «Նշենիների թատրոն»ի շենքի դիմաց

LE NOUVEL AN ET LE NOËL À LILLE

Selon la tradition, la communauté arménienne de Lille fête simultanément le Noël et le Nouvel An: Dans une des salles confortables de Mons en Baroeul notre nombreuse communauté a commencé la fête par des félicitations et de meilleurs vœux réciproques. Les invités d'honneur de cette manifestation ont été la lilloise Tatiana Mouromzeff et l'historien français Dominique Bajart accompagné de son épouse. Tatiana Mouromzeff, cette dame d'un âge avancé avec des origines arméniennes a une histoire de vie exceptionnellement intéressante qu'elle expose dans sa monographie *À la recherche de ma Russie*. Dominique Bajart est connu de nos lecteurs par sa conférence sur l'Arménie donnée à l'Hospice d'Havré de Tourcoing.

Photo : Garik Galstyan

Photos : Garik Galstyan

Jaqueline Kasparian et Tatiana Mouromzeff, Dominique Bajard et son épouse
Ժակլին Կասպարյան և Տատյանա Մուրոմզեֆ, Դոմինիք Բաժարն՝ իր տիկնոջ հետ

տահայտություն է, որը լի է մեծ հույսերով և ողջախոհությամբ, մնում է անմիջապես անորոշության մեջ՝ Սարոյի մահվան լուրի պատճառով: Այսպիսով կար ավելի քան պատվավոր ելքի մի ճանապարհ. քահանան առաջարկում էր հաստատել այդ միությունը՝ ելնելով միակ և եզակի մի պայմանից, որն էր փոխադարձ սերը: Այժմեականությունը մնում է ավանդականի հետ փոխկապակցված: Ցավոք, պատասխանն անգամ չհասցրեց դուրս գալ Անուշի շուրթերից: Եվ ինչո՞ւ է հենց քահանան մարմնավորել այդ մեկնած ձեռքը: Իմ կարծիքով, կա ամենաքիչը երկու պատճառ: Առաջինն ավելի համընդհանուր է և գտնվում է անմիջական կապի մեջ քրիստոնեության փիլիսոփայության հետ: Խոսքը եկեղեցու մասին չէ, այլ սիրո փիլիսոփայության, որն է այդ կրոնն՝ անկախ այն բանից դու հավատացյալ ես թե ոչ, քրիստոնյա ես թե ոչ, սկզբունքորեն չի կարող հակադրվել սիրուն: Երկրորդն ավելի «ազգային» է. Հ. Թումանյանը ցանկանում է ընդգծել Եկեղեցու, որպես հաստատության, սոցիալական դերը, որը նրան է վերագրում մի ամբողջ ժողովուրդ: Այդ վստահությունը, հավանաբար, հիմնավորված է պատմությունով: Եվ Հ. Թումանյանը հայկական հասարակության երեք հիմնասյուների՝ ընտանիքի (ավանդույթների գերագույն պահապանը), քաղաքական իշխանության և եկեղեցու միջև հիմնական շեշտն ավելի շուտ դնում է (և նույն առիթով էլ դա կարող է նաև քննադատության առարկա դառնալ) հենց վերջինի վրա: «Անուշ»ը, իիրավի, մի պատմություն է, որը բոլորովին չի հնացել՝ բացառությամբ մեկ նշանակալից հանգամանքի. մեր օրերում չի երևում, թե այս հիմնասյուներից ո՞րը կարող է լինի հույսի աղբյուր: Ներկայիս իշխանությունը դժվարությամբ է արդիականանում՝ վախենալով կորցնել իշխանության սանձերը, որը երկրորդական պլան է տեղափոխում ազգի շահերի ծառայությունը: Ո՞րն է այսօր եկեղեցու բռնած ուղղությունը, ունի՞ նա նույն այս իշխանության դեմքը, որին այսքան մոտ է գտնվում: Իսկ գլոբալիզացված աշխարհում ավանդական ընտանիքի ապագան իր դարերից եկող արժեքներով մնում է անորոշ:

Այսպիսով ժամանակակից և այս երկու՝ Հ. Թումանյանին և Ա. Տիգրանյանին, ավելի հավատարիմ «Անուշ»ը, կարծես թե, էլ ավելի այժմեական է, քան թե իր ստեղծման ժամանակ: Այս տեսակետն արդեն բավական է, որպեսզի ծափահարենք նրա գալուստը: Ս. Ավետիքյանը բավական խորաթափանցությամբ ցույց է տալիս տվյալ արդիականությունը, և այս տեսանկյունից սա արդեն հաջողություն է:

Վահե Մուղնե

ԱՄԱՆՈՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԼԻԼՈՒՄ

Ավանդույթի համաձայն Լիլի հայ համայնքը միատեղ է նշում Սուրբ Ծնունդը և Ամանորը: Մոնս ան Բարոլի հարմարավետ սրահներից մեկում բազմամարդ համայնքը հանդեսն սկսեց փոխադարձ շնորհավորանքներով և բարեմաղթանքներով: Միջոցառման պատվավոր հյուրերն էին լիլաբնակ Տատյանա Մուրոմզեֆն ու ֆրանսիացի պատմաբան Դոմինիկ Բաժարը՝ տիկնոջ հետ: Տատյանա Մուրոմզեֆի՝ հայկական արմատներով այս պատկառելի տիկնոջ կյանքի պատմությունը շատ հետաքրքիր է, ինչը նա ներկայացրել է «Վերադարձ դեպի իմ Ռուսաստան» մենագրության մեջ: Դոմինիկ Բաժարը մեր ընթերցողներին հայտնի է Թուրքուենի Հավրեի հոսպիսում Հայաստանի մասին կարդացած դասախոսությամբ:

Photos : Garik Galstyan

L'ambiance de fête a communiqué de la bonne humeur à tous
Տոնական բարձր տրամադրությունը համակել էր բոլորին

La table de Noël a été variée et superbe : le traditionnel barbecue, les salades, les friandises et pâtisseries délicieuses préparées par les dames arméniennes.

Photos : Garik Galstyan

L'arrivée d'un jeune Père Noël a été une surprise agréable pour les enfants.

L'arrivée d'un jeune Père Noël a été une surprise agréable pour les enfants. Il a distribué des cadeaux et transmis ses meilleurs vœux à chaque enfant.

Organisées par des jeunes, les danses et chansons arméniennes ont plané longuement dans l'air de la salle des fêtes, en communiquant de la bonne humeur à tous.

Jacqueline Kasparian

Pour la cinquième année l'association *Ararat* souhaitait fêter les femmes à l'occasion de la journée internationale qui leur est consacrée tous les 8 mars.

Louisette, Ruzanna, Alla et Jacqueline ont commencé par participer aux festivités locales. Parmi les nombreuses manifestations proposées, la Ville de Lille avait, en effet, pour l'occasion ouvert gratuitement en soirée, le Palais des Beaux-arts de la ville. Un parcours guidé avait été organisé permettant de découvrir certaines œuvres créées par des artistes féminines ou représentant la femme à différentes époques. Du *Portrait de Marie de Médicis* de van Dyck au *Portrait de Berthe Morisot à l'éventail* d'E. Manet, des *Lavandières* de Goya à une *Femme faisant déjeuner ses enfants* de J.-F. Millet…, nous sommes ainsi passées du 15e au 19e siècle.

Un cocktail et une garderie pour les enfants étaient organisés sur les lieux. Après le discours de Martine Aubry, Maire de Lille, nous avons cheminé dans ce magnifique édifice, nous régalant de ces œuvres d'une très grande richesse. Nous nous sommes quittées tard et émerveillées.

LA FEMME EST UNE SOURCE D'INSPIRATION DE TOUS LES TEMPS

Durant tous les siècles de l'histoire de l'humanité la femme a été la source de l'inspiration des écrivains et des artistes et ce n'est pas par hasard que les meilleurs œuvres artistiques sont dédiées à la femme.

La communauté arménienne a célébré la fête internationale des femmes d'une façon originale en organisant une visite inoubliable du plus célèbre musée du monde : le Louvre. La sortie parisienne a été montée grâce à la mobilisation de Nariné, Habiba et Ella. En effet, pour aller à Paris à petit prix, il fallait solliciter au nom de femmes de Mons en Barœul un financement du Fond de participation des habitants et que cela ait du sens pour toutes. Le but était de partager une sortie extraordinaire entre femmes d'origines différentes et Monsoises. Un réseau pour traiter de la question des femmes devait être constitué. L'envie étant partagée, restait à trouver l'objet du déplacement.

Le Musée du Louvre organisait pour la septième année une semaine de la femme pour permettre l'accès gratuit à un public peu coutumier de ce lieu, celui des centres sociaux et des associations. De nombreuses visites autour du thème de la femme

Բազմազան ու ճոխ էր ամանորյա սեղանը՝ ավանդական խորոված, հայ կանանց պատրաստած համեղ աղցաններ, քաղցրավենիքներ ու թխվածքներ:

Photos : Garik Galstyan

Երիտասարդ Ձմեռ պապիկի գալը հաճելի անակնկալ էր երեխաների համար

Երեխաներին հաճելի անակնկալ էր նաև երիտասարդ Ձմեռ պապիկի ժամանումը, որը յուրաքանչյուր փոքրիկի նվերներ բաժանեց ու բարեմաղթանքներ հղեց:

Մեր երիտասարդների ջանքերով երկար ժամանակ հանդիսությունների սրահում թևածում էին հայկական երգն ու պարը՝ բարձր տրամադրությամբ համակելով բոլորիս:

Ժակլին Կասպարյան

Հինգերորդ տարին անընդմեջ «Արարատ» միությունը ցանկացավ մեծարել կանանց՝ Կանանց միջազգային օրվա առթիվ, որը միշտ նշվում է մարտի 8-ին:

Լուիզեթը, Ռուզաննան, Ալլան և Ժակլինը սկսեցին Լիլում կազմակերպվող տոնական միջոցառումներին մասնակցելուց: Առաջարկված բազմաթիվ միջոցառումների շրջանակներում Լիլի քաղաքապետարանը Գեղարվեստի թանգարանի մուտքը մի երեկո դարձրել էր անվճար: Հատուկ կազմակերպվել էր էքսկուրսիա՝ հնարավորություն տալով բացահայտելու որոշ ստեղծագործություններ, որոնք ստեղծել են կին արվեստագետներ կամ էլ պատկերում են տարբեր ժամանակների կանանց՝ Վան Դեյքի «Մարիա Մեդիչիի դիմանկար»ից մինչև Է. Մանեի «Հովհարով Բերթ Մորիզոյի դիմանկարը», Գոյայի «Լվացարարուհիներ»ից մինչև Ժ.-Ֆ. Միյեի «Երեխաներին նախաճաշ տվող կինը»... Այսպիսով մենք անցանք 15-րդ դարից մինչև 19-րդը:

Տեղում կազմակերպվել էին երեխաներին զբաղացնելու խմբակ և կոկտեյլ: Լիլի քաղաքապետ Մարտին Օբրիի ելույթից հետո մենք դանդաղ քայլեցինք այս հոյակապ շինության սրահներով՝ զմայլվելով ցուցադրվող մեծարժեք ստեղծագործություններով: Հիացած՝ մենք միմյանց հրաժեշտ տվեցինք միայն ուշ երեկոյան:

ԿԻՆԸ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ Է

Մարդկության պատմության բոլոր դարաշրջաններում կինը եղել է գրողների և արվեստագետների ներշնչանքի աղբյուրը, և պատահական չէ, որ արվեստի ստեղծագործությունների լավագույն նմուշները կնոջն են նվիրված:

Կանանց միջազգային տոնը յուրովի նշեց հայկական համայնքը՝ իրականացնելով անմոռաց մի այցելություն դեպի աշխարհի ամենանշանավոր թանգարան՝ Լուվր: Փարիզյան այս ճամփորդությունը կազմակերպվեց ի շնորհիվ Նարինեի, Հաբիբայի և Էլլայի ակտիվ համագործակցության: Փարիզ ավելի էժան տոմսով ուղևորվելու համար, իրականում, հարկավոր էր Մոնս ան Բարոլի կանանց անունից ֆինանսավորում խնդրել «Բնակիչների մասնակցության հիմնադրամ»ից, և որ այդ ամենը պետք է ունենար ընդհանուր համախմբող նպատակ բոլորի համար. համատեղ իրականացվող այս բացառիկ ճամփորդությանը պետք է մասնակցեին տարբեր ծագումով մոնսաբնակ կանայք: Կանանց նվիրված այս միջոցառման կազմակերպումը ենթադրում էր բազմազան կապերի ստեղծում: Այսպիսով, ունենալով համատեղ ձեռնարկի ցանկություն, մնում էր գտնել կատարվելիք այցելության առարկան:

étaient organisées sous la conduite de guides conférenciers bénévoles et professionnels. La gratuité des visites était permise grâce au mécénat de fondations comme celle des entreprises Total et de la Macif.

Photo : Louisette Lamarche

Le groupe de femmes arméniennes de Lille au Musée du Louvre
Լիլահայ կանանց խումբը Լուվրի թանգարանում

C'étaient donc exclusivement les femmes qui avaient le droit de participer à l'excursion. En chantant, rigolant et causant trente représentantes de l'association *Caramel* et trente représentantes arméniennes du beau sexe sont arrivées en bus à Paris, juste devant les portes du Louvre. Trois excursions thématiques les attendaient ici : « La représentation de la femme dans les chefs d'œuvres », « Fards et Parfums en Egypte ancienne » et « Parures et bijoux ». Après s'être respectivement divisé en trois groupes, la visite des expositions a commencé.

Notre premier groupe, qui a préféré la partie consacrée à la peinture, a vraiment vécu des moments magiques d'admiration. Ce palais, qui trône magnifiquement sur les rives de la Seine, contient des milliers de tableaux, de sculptures, de céramiques qui glorifient la beauté, la grâce et le bienfait des femmes. La sculpture en marbre de la déesse de l'amour et de la beauté : la Venus de Milos, qui nous est parvenue de l'époque hellénique de l'Ancienne Grèce, en est un brillant témoignage. Depuis près de deux cents ans, ce vrai symbole de la beauté est conservé au musée du Louvre et émerveille des millions de visiteurs.

Dans cette partie de l'exposition ont été présentés des masques posthumes de femmes égyptiennes, romaines. Dans la partie de l'Ancien Orient nous avons également agréablement contemplé un ancien khatchkar arménien tout en touchant avec douceur ses ornements uniques.

Photo : Louisette Lamarche

La visite du Louvre a été suivi par une promenade fluviale sur la Seine
Լուվրի այցելությանը հաջորդեց Սենայի երկայնքով նավարկությունը

Յոթերորդ տարին անընդմեջ Լուվրի թանգարանը կազմակերպում էր կանանց նվիրված շաբաթ՝ հնարավորություն տալով սոցիալական կենտրոններին և միություններին, որոնք ամենօրյա այցելուների թվին չեն պատկանում, անվճար մուտք գործել թանգարան: Կանանց թեմայով բազմաթիվ այցելություններ էին կազմակերպվում կամավոր և պրոֆեսիոնալ էքսկուրսավարների ուղեկցությամբ: Էքսկուրսիաների անվճար լինելը հնարավոր էր դարձել ի շնորհիվ բարեգործական ձեռնարկությունների հիմնադրամների, ինչպիսին են «Տոտալ»ը և «Մասիֆ»ը:

Այսպիսով, էքսկուրսիային մասնակցելու բացառիկ իրավունքը տրված էր միայն կանանց: «Կարամել» և «Արարատ» միությունների գեղեցիկ սեռի երեսունական ներկայացուցիչներ երգելով, կատակելով ու զրուցելով՝ ավտոբուսով հասան Փարիզ, ուղիղ Լուվրի դարպասների մոտ: Այստեղ նրանց սպասվում էր երեք թեմատիկ էքսկուրսիա՝ «Կնոջ կերպարը համաշխարհային արվեստի գլուխգործոցներում», «Հին Եգիպտոսի պաճուճանքներ և օծանելիք» և «Կանացի զարդարանքներ»: Համապատասխանաբար բաժանվելով երեք խմբի՝ սկսեցինք ցուցանմուշների դիտումը:

Մեր առաջին խումբը, որը նախընտրեց կերպարվեստին նվիրված հատվածը, իիրավի ապրեց հիացմունքի սքանչելի պահեր: Սենայի ափին փառավորապես բազմած այս պալատն իր մեջ ամփոփում է հազարավոր գեղանկարներ, քանդակներ, խեցեղեն աշխատանքներ, որոնք գովերգում են կնոջ գեղեցկությունը, նազանքը, բարեկազմությունը: Դրա փայլուն վկայությունը սիրո և գեղեցկության աստվածուհի Միլոյան Վեներայի մարմարակերտ արձանն է, որը մեզ է հասել Հին Հունաստանի հելլենիստական ժամանակաշրջանից: Հիրավի գեղեցկության այս խորհրդանիշը շուրջ երկու հարյուր տարի պահվում է Լուվրի թանգարանում՝ հիացնելով բազմամիլիոն այցելուներին:

Ցուցադրանքի այս բաժնում ներկայացված էին եգիպտական և հռոմեական կանանց հետմահու դիմակներ: Հին Արևելքի բաժնում հաճույքով դիտեցինք նաև հայկական հնագույն խաչքարը՝ ջերմությամբ հպվելով նրա անկրկնելի զարդանախշերին:

Այնուհետև անցնելով պալատի հիասքանչ սրահներով՝ դիտեցինք տարբեր դարաշրջանների կերպարվեստի բոլոր ուղղությունների հանճարների ստեղծագործությունները՝ նվիրված կնոջը: Դրանց մեջ, իհարկե, ամենաներկայացուցչականը՝ Լեոնարդո դա Վինչիի Մոնա Լիզան է: Վերածննդի դարաշրջանի հանճարի այս գործը, որը ստեղծվել է հինգ հարյուր տարի առաջ, Լուվրի թանգարանի այցեքարտն է և դեպի իրեն է ձգում արվեստասերներին: Աշխարհի ամենաճանաչված կտավը, հակառակ իր փոքրածավալ չափերին, hըսկայական բավականություն պատճառեց դիտորդներին:

Photo : Louisette Lamarche

Ensuite en passant par les superbes salles du palais nous avons contemplé les œuvres, dédiées à la femme, des maîtres de la peinture de toutes les époques et de tous les courants. Parmi elles, bien évidemment, la plus représentative est le *Portrait de Mona Lisa* de Léonard de Vinci. L'œuvre du génie de la Renaissance, qui a été réalisée il y a cinq cents ans, est la carte de visite du musée du Louvre et attire à elle les amateurs des arts. La toile la plus connue du monde, en dépit de ses dimensions modestes, a apporté une énorme satisfaction aux visiteuses.

Notre deuxième groupe a choisi l'exposition « Fards et parfums en Egypte ancienne » avec une guide extrêmement dynamique et amusante. Après avoir croisé « Monsieur fesses molles » (statue d'un homme nu de l'antiquité qualifiée ainsi par la guide), elle nous expliqua l'usage inattendu de certains instruments de musique et la tradition de se couvrir les cheveux d'une perruque par pudeur comme d'autres le font aujourd'hui avec un voile.

La visite du Louvre a été suivi par une agréable promenade fluviale tout le long de la Seine lors de laquelle nous avons découvert de magnifiques monuments et bâtisses de Paris.

Retour vers Lille et de nouveau les chants, le rire et la gaité dans le bus. Le partage des cultures s'est opéré autour de deux films : *Le piano* de Lévon Minasian et *La source des femmes* de Radu Mihaileanu. C'est ainsi que cette journée a été un succès. Les représentants du fond de participation des habitants nous ont fortement encouragées à renouveler notre expérience l'année prochaine et à trouver des développements à Mons en Barœul même. Nous nous reverrons donc à la rentrée pour de nouveaux projets.

Jacqueline Kasparian et Louisette Lamarche

DE LA DÉMONSTRATION À LA PRATIQUE DE LA DANSE ARMÉNIENNE

Par un très froid soir d'hiver, nous sommes parties à Gand, Narine et moi, à la rencontre d'Enok Stepanyan, professeur de danse arménienne. L'objectif : redémarrer les cours de danse auxquels nous avions tant pris de plaisir l'année dernière avec Lusine Ghazaryan qui, ayant d'autres projets professionnels, ne souhaitait pas poursuivre ses cours.

Il avait neigé la veille et nous partions pour Gand à demi rassurées, après le travail, devisant sur notre détermination. Sur l'indication d'Emin et Lilit, Narine et Garik avaient déjà pris un premier contact téléphonique avec le maître. Après s'être bien perdues en banlieue gantoise malgré le GPS, nous nous sommes retrouvées autour d'une belle table dressée pour nous.

Après des paroles de bienvenue, E. Stepanyan nous déclare que Lille est trop loin et qu'il ne lui sera pas possible de venir. Ce n'était pas encore gagné… Mais quand femmes veulent…

Photo : Louisette Lamarche

La troupe *Sevan* sur la scène monsoise / «Սևան» համույթը Մոնսի բեմի վրա

Մեր երկրորդ խումբն ընտրեց «Հին Եգիպտոսի պաճուճանքներ և օծանելիք» ցուցահանդեսը՝ չափազանց շարժունակ և զվարճալի էքսկուրսավարի ուղեկցությամբ: «Կակուղ հետույքով պարոն»ի (անտիկ աշխարհի մի տղամարդու մերկ արձան՝ ըստ էքսկուրսավարի բնութագրման) արձանի կողքով անցնելուց հետո նա մեզ բացատրեց որոշ երաժշտական նվագարանների անսպասելի կիրառումների և ամոթխածությունից ելնելով՝ մազերը կեղծամով ծածկելու սովորույթի մասին, ինչպես այսօր շատերն են դա անում շղարշով:

Լուվրին հաջորդեց Սենայի երկայնքով հաճելի նավարկությունը, որի ընթացքում ծանոթացանք Փարիզի հոյակերտ ճարտարապետական հուշարձաններին ու կառույցներին:

Վերադարձ դեպի Լիլ, դարձյալ երգ, ծիծաղ ու խնդություն ավտոբուսում: Մշակույթների փոխհարստացում տեղի ունեցավ երկու ֆիլմի՝ Լևոն Մինասյանի «Դաշնամուր»ի և Ռադու Միհայլեանուի «Կանանց աղբյուր»ի շուրջը: Այսպիսով, մեր այս օրը պսակվեց հաջողությամբ: «Բնակիչների մասնակցության հիմնադրամ»-ի ներկայացուցիչները մեզ ակտիվորեն խրախուսեցին հաջորդ տարին ևս կրկնել մեր այս նախաձեռնությունը՝ փնտրելով զարգացումներ նաև Մոնս ան Բարոլում: Աշնանից սկսված մենք նոր ծրագրեր կկազմենք:

Ժակլին Կասպարյան և Լուիզեթ Լամարշ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հունվարյան մի շատ ցուրտ երեկո էր, երբ մենք՝ ես ու Նարինեն, ուղևորվեցինք Գենտ՝ հայկական պարի պարուսույց Ենոք Ստեփանյանի հետ հանդիպելու: Նպատակն էր շարունակել անցյալ տարի Լուսինե Ղազարյանի հետ սկսած պարի պարապմունքները, որոնք մեզ այդքան հաճույք էին պատճառել: Ունենալով այլ մասնագիտական ծրագրեր՝ Լուսինեն չցանկացավ շարունակել պարի դասերը:

Նախօրյակին առատ ձյուն էր եկել: Աշխատանքային օրն ավարտելուց հետո կիսով չափ վստահ ճանապարհվեցինք Գենտ՝ մտորելով մեր վճռականության շուրջ: Էմինի և Լիլիթի ցուցումով Նարինեն և Գարիկը պարուսույցի հետ արդեն ունեցել էին առաջին հեռախոսային շփումները: Գենտի արվարձաններում մոլորվելուց հետո, չնայած նավիգատորի առկայությանը, մենք հայտնվեցինք մեզ համար հատուկ բացված մի գեղեցիկ սեղանի շուրջը:

Բարի գալուստ մաղթելուց հետո Ե. Ստեփանյանը հայտարարեց, որ Լիլը շատ հեռու է, և որ իր համար անհնար կլինի այնտեղ գնալ: Ոչինչ դեռ վճռված չէր… Բայց երբ կանայք ցանկանում են…

Մեր սերը դեպի պարն ընդհանուր էր: Ըստ Ե. Ստեփանյանի դրած պայմանի՝ պետք է կազմավորվեին ամենաքիչը 16 հոգուց բաղկացած երկու խումբ՝ կայուն հաճախելիությամբ: Նրա համար ամենակարևորը կանոնավորությունն է և իր աշխատանքը ցույց տալու հնարավորությունը: Մասնակիցների պայմանավորված քանակի կանոնավոր հաճախելիությունը գտնվում էր կասկածի տակ: Փոխարենը հավանական ելույթի

Photo : Louisette Lamarche

La troupe *Sevan* sur la scène monsoise / «Սևան» համույթը Մոնսի բեմի վրա

La passion était partagée. Le deal posé par E. Stepanian a été de constituer deux groupes stables de participants de 16 personnes au moins. Le plus important pour lui est la régularité et la possibilité de montrer son travail. Pour nous la régularité du public, au nombre voulu, n'était pas sûre. En revanche, la possibilité d'une éventuelle démonstration faisait partie de l'objectif de notre association, à savoir, faire découvrir la culture arménienne aux autres peuples, donc montrer nos danses, entre autres.

L'expérience d'Enok Stepanyan est importante tant en Arménie qu'en Belgique où ses cours ont donné lieu pour certains à la création de troupes capables de produire un spectacle.

C'est ainsi que nous avons invité la troupe *Sevan* de Bruxelles à venir se produire dans la Salle Allende à Mons en Barœul le 31 mars 2013, jour de Pâques. Plus de 130 spectateurs ont pu ainsi savourer un spectacle, produit après 10 ans de pratique pour certains danseurs. Il a duré plus d'une heure et mis en scène 25 danseurs enfants et jeunes. Les musiques étaient traditionnelles et connues de beaucoup. La force, la grâce et l'émotion ont ponctué ce spectacle. Certains sont sorti les larmes aux yeux … Pour d'autres c'était la découverte très apprécié de notre culture.

L'appel était fait, la semaine suivante nous démarrions nos cours hebdomadaires pour enfants et adultes.

26 enfants se sont inscrits très vite et ont apprécié cet apprentissage. Les mamans et papas ont eu plaisir à regarder leurs enfants évoluer lorsque le maître le permettait. Celui-ci est exigeant et rude parfois parce qu'il souhaite obtenir le meilleur des enfants. Il a su également entendre nos craintes que son niveau d'exigence puisse décourager certains enfants, l'essentiel étant pour tous le plaisir et la volonté de transmettre la culture arménienne.

16 adultes de 16 à 47 ans ont aussi fait le pari de se mettre ou de se perfectionner à ces danses. La danse arménienne s'est révélée être une vraie discipline sportive. Ainsi, après une période d'adaptation très physique et quelques « bobos », nous avons tous progressé très rapidement et avons appris trois danses complètes que nous allons devoir peaufiner pour avoir la coordination parfaite qu'exige ces danses d'ensemble. C'est ainsi que nous nous sommes quittés pour les vacances avec la ferme volonté de reprendre dès septembre cet apprentissage et de la partager avec le plus grand nombre.

Louisette Lamarche

Photos: Garik Galstyan

Première cour de danse d'Enok Stepanyan pour les enfants arméniens de Lille
Ենոք Ստեփանյանի առաջին պարի պարապմունքը լիլահայ երեխաների համար

հնարավորությունը մտնում էր մեր միության նպատակների մեջ. օտարներին բացահայտել հայ մշակույթը, տվյալ դեպքում՝ ցուցադրել մեր պարերը:

Ենոք Ստեփանյանն ունի մասնագիտական մեծ փորձ ինչպես Հայաստանում, այնպես էլ Բելգիայում, որտեղ որոշ մասնակիցների համար դասերը պսակվել էին ներկայացում տալու ունակ խմբերի կազմավորմամբ:

Ահա թե ինչպես 2013 թ. մարտի 31-ին՝ Զատիկի օրը, մենք հրավիրեցինք Բրյուսելի «Սևան» համույթին Մոնս ան Բարոլի Ալենդեի անվան դահլիճ՝ ելույթ ունենալու: Ավելի քան 130 հանդիսատեսներ վայելեցին այս ներկայացումը, որի մեջ ընդգրկված որոշ պարողներ ավելի քան տաս տարի է պարապում են: Քսանհինգ երեխա և պատանի պարողների մասնակցությամբ ներկայացումը տևեց մեկ ժամից ավել: Երաժշտությունն ազգային էր և բոլորին ծանոթ: Ուժը, հմայքը և հուզմունքը լցրել էին համերգասրահը: Որոշ հանդիսատեսներ ներկայացումից դուրս եկան արցունքոտ աչքերով: Մյուսների համար դա մեր մշակույթի արժանի բացահայտումն էր:

Կոչն արված էր, և հաջորդ շաբաթ մենք պետք է սկսեինք մեր շաբաթօրյա պարապմունքները՝ երեխաների ու մեծահասակների համար:

Շատ շուտ գրանցվեցին 26 երեխա, ովքեր բարձր գնահատեցին այս ուսուցումը: Պարուսույցի թույլատվությամբ՝ նրանց ծնողները հաճույքով էին դիտում, թե ինչպե՞ս են իրենց երեխաներն առաջադիմում: Ենոք Ստեփանյանը պահանջկոտ էր և երբեմն էլ կոպիտ, որովհետև ցանկանում էր, որ երեխաները հասնեն լավագույն արդյունքի: Նա կարողացավ նաև լսել մեր զգուշավոր ակնարկները, թե նրա բարձր պահանջները կարող են վհատեցնել որոշ երեխաների, և որ մեզ համար գլխավորը հաճույքն է ու հայ մշակույթ փոխանցելու ցանկությունը:

16-ից 47 տարեկան 16 մեծահասակ նույնպես որոշեցին սկսել կամ էլ կատարելագործել այս պարերը: Ստացվեց, որ հայկական պարը մի իսկական մարզաձև է: Այսպիսով, խիստ մարզական ընտելացման փուլից և մի քանի փոքր վնասվածքներից հետո բոլորս շատ շուտ առաջադիմեցինք: Սովորեցինք երեք ամբողջական պար, որոնք պետք է դեռ կատարելագործենք, որպեսզի ունենանք խմբակային պարերի համար պահանջվող կատարյալ համաձայնեցվածությունը: Այս մտադրությամբ էլ ամառային արձակուրդների պատճառով մենք բաժանվեցինք՝ ունենալով հաստատուն որոշում սեպտեմբեր ամսից վերսկսել պարուսուցումը և ներգրավել էլ ավելի մասնակիցների:

Enok Sepanyan
Ենոք Ստեփանյան

Լուիզեթ Լամարշ

Photo : Louisette Lamarche

Enok Stepanyan et la troupe *Sevan* de Bruxelles sont chalheureusement applaudis par le public lillois
Ենոք Ստեփանյանն ու Բրյուսելի «Սևան» համույթն արժանացան լիլաբնակ հանդիսատեսի ջերմ ծափահարություններին

VOYAGE EN ARMÉNIE

Tatiana Mouromzeff-Saarbekova
Տատյանա Մուրոմզեֆ-Սաարբեկովա

À l'occasion d'un anniversaire marquant une nouvelle dizaine, des amis m'ont offert une participation à un voyage en Arménie. Ancienne république de l'URSS, l'Arménie a conquis son indé-pendance en 1991. Elle a gar-dé pour capitale Erevan, choi-sie par les Russes.

Je ne connaissais pas ce pays, patrie de mes ancêtres côté maternel. Il était temps de faire connaissance. Je ne peux que vous livrer les impressions que j'en ai rapportées.

On était au mois d'octobre, dans ce pays montagneux qui connait 320 jours d'ensoleillement annuel ! Nous avons bénéficié d'un temps idéal, ni froid ni caniculaire, juste à la bonne température.

Le complexe hôtelier étant inexistant à l'époque, nous avons logé à Erevan pendant tout le séjour, à l'Hôtel Europa fraîchement inauguré, doté de tous les éléments de confort auxquels les Occidentaux sont habitués. Avantage non négligeable, qui nous dispensait de boucler notre valise tous les jours.

Notre guide, Nariné, était professeur d'arménien et de français dans une école d'État. Elle s'est arrangée avec des collègues pour se libérer pendant une semaine afin de nous accompagner. Ce travail, donnant droit à une rémunération, augmentait considérablement les revenus de son maigre salaire.

Le chauffeur, Karo, était un as du volant. Habitué aux aléas de la route – nids de poules, troupeaux de vaches ou de moutons sur la chaussée, routes effondrées comme après une secousse sismique – il contournait tous les obstacles sans jamais heurter les voitures venant en face, ni celles qu'il doublait. Toujours calme dans des situations où des Français se seraient envoyé des noms d'oiseaux.

Nous avons donc sillonné ce pays (autrefois grand royaume, réduit à la taille de la Belgique) selon un programme très intelligemment pensé. Une journée suffisait pour le traverser du Nord au Sud, de l'Est en Ouest. 80 % du pays est fait de montagnes pierreuses et de tuf volcanique. Les étendues désertiques à la pauvre herbe jaune semées de grands blocs roses, gris ou noirs, sont grandioses et impressionnantes de beauté. Les églises en pierre (y compris le toit) des V-VI^{e}, XII^{e} siècle et les monastères sont perchés sur des pitons rocheux et dominent le plateau arménien tourmenté.

Sur le plan religieux, nous avons eu l'honneur de recevoir la visite du chef de l'Eglise officielle – Eglise Apostolique Arménienne – Karekine II à l'époque. Il nous a expliqué l'organisation de l'Eglise, son fonctionnement, l'enseignement de la religion et de la théologie – explications concrétisées par l'assistance à l'office du dimanche à Etchmiadzine.

La découverte de la gastronomie arménienne était assurée par le changement permanent de restaurants qui s'ingéniaient à varier les menus. Quand nous n'avions pas le temps de revenir à Erevan pour le repas de midi, nous piqueniquions dehors. C'était un ajout à l'ambiance de vacances. Le dernier soir nous avons dîné en musique, dans celui où Charles Aznavour avait fêté son anniversaire.

À l'époque, la population de l'Arménie a été de trois millions d'habitants. Il y en avait cinq dans la diaspora. L'exode

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ ծննդյան հերթական հոբելյանը նշելու առիթով ընկերներս ինձ նվիրեցին ուղեգիր՝ դեպի Հայաստան ճամփորդություն կատարելու համար: Հայաստանը՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից մեկը, ձեռք է բերել իր անկախությունը 1991 թ.: Նա պահպանել է որպես մայրաքաղաք Երևանը, որը դեռ ռուսներն էին ընտրել:

Ես ծանոթ չէի այս երկրին՝ իմ մայրական կողմի նախնիների հայրենիքին: Ժամանակն էր, որ ծանոթանայի նրա հետ: Ընթերցողին ես կարող եմ միայն փոխանցել ինձ հետ բերած տպավորությունները:

Հոկտեմբեր ամիսն էր այս լեռնային երկրում, որտեղ տարին 320 օր արև է շողում: Մեզ համար եղանակն իդեալական էր՝ ո՛չ ցուրտ, ո՛չ շոգ, ճիշտ այնպիսի ջերմաստիճան, ինչպիսին պետք էր:

Այդ տարիներին հյուրանոցային ցանց համարյա թե գոյություն չուներ և ամբողջ մեր այցելության ժամանակ մենք հանգրվանեցինք Երևանում՝ նոր բացված «Եվրոպա» հյուրանոցում, որն ուներ Արևմուտքում ապրող մարդու համար բոլոր հարմարությունները: Դա կարելի էր համարել առավելություն, որը մեզ ազատեց ամեն օր ճամպրուկներ կապելու հոգսից:

Մեր ուղեկցուհին՝ Նարինեն, հայոց լեզվի և ֆրանսերենի ուսուցչուհի էր պետական դպրոցներից մեկում: Մեզ ուղեկցելու առիթով նա պայմանավորվել էր իր գործընկերների հետ՝ մեկ շաբաթ բացակայելու համար: Մեզ հետ վարձատրվող աշխատանքը շոշափելիորեն լրացնում էր նրա ցածր աշխատավարձից կազմված եկամուտը:

Վարորդը՝ Կարոն, ղեկի իսկական վարպետ էր: Ճանապարհների վտանգներին՝ փոսերին, խճուղիների վրայի կովերի նախիրներին ու ոչխարների հոտերին, ինչպես երկրաշարժից հետո քանդված ճանապարհներին սովոր լինելով՝ նա շրջանցում էր բոլոր խոչնդոտները՝ առանց գեթ մեկ անգամ դիպչելու ո՛չ դիմացից եկող մյուս ավտոմեքենաներին, ո՛չ էլ վազանցողներին: Այն իրավիճակներում, որոնց ժամանակ ֆրանսիացիները հայհոյանքի տարափ կտեղային, նա միշտ պահպանում էր հանգստությունը:

Ըստ խելամտորեն մտածված ծրագրի՝ մենք այսպիսով «ակոսեցինք» ամբողջ երկիրը, որը վաղնջական ժամանակներում մի մեծ թագավորություն էր և հիմա փոքրացվել է մինչև Բելգիայի չափսերը: Մեկ օրը բավական է, որպեսզի անցնես հյուսիսից՝ հարավ և արևելքից՝ արևմուտք: Երկրի 80 % կազմըված է քարքարոտ և հրաբխային լեռներից: Աղքատ դեղնագույն բուսականությամբ և ամենուրեք ցրված վարդագույն, մոխրագույն կամ սև քարաբեկորներով անապատային տարածքների գեղեցկությունը հիանալի և տպավորիչ էր: Լեռնային բարձրությունների վրա «ծվարած» V-VI և XII դարերի քարե եկեղեցիներն՝ իրենց քարակերտ տանիքներով, ու մենաստանները իշխում էին անհարթ հայկական բարձրավանդակի վրա:

Կրոնական ծրագրի շրջանակներում մենք պատիվ ունեցանք հանդիպելու Հայոց առաքելական եկեղեցու առաջնորդի՝ Գարեգին Երկրորդի հետ: Նա մեզ ծանոթացրեց հայ Եկեղեցու կառուցվածքին, նրա գործունեությանը, կրոնի և կրոնագիտության դասավանդման գործընթացին: Այս բացատրությունները ավելի հստակեցվեցին կիրակնօրյա պատարագի ժամանակ, որին ներկա եղանք Էջմիածնում:

Հայկական խոհանոցին ծանոթությունը կատարվում էր ռեստորաններն անընդմեջ փոխելով: Այդ ճաշատները հնարամտորեն բազմազանում էին իրենց ճաշացուցակները: Երբ ժամանակը չէր ներում վերադառնալ Երևան ճաշելու, մենք զբոսախնջույք էինք կազմակերպում բնության գրկում: Դա մի հավելում էր արձակուրդային մթնոլորտին: Վերջին օրվա ըն-

est important. Mais les Arméniens ayant fait fortune à l'étranger reviennent se faire construire de belles villas dans la région prospère.

Un jour, lors d'une des visites, je fus étonnée quand j'entendis Nariné nous dire : « Attention pour les photos. Nous sommes à la frontière – les Turcs nous surveillent ». La guide nous a également rappelé le tremblement de terre de 1988 dont les conséquences sont importantes. Lors des voyages nous rencontrions partout les enfants impeccablement habillés. Ils ne partaient pas pour une fête mais bien pour l'école.

La langue et l'alphabet arméniens n'évoquent aucune lettre ni son connus (de moi). À force de voir des cartes postales du mont Ararat et le dram, la devise nationale … j'ai appris quelques lettres.

Les principaux partenaires de l'Arménie sont la Russie et l'Iran. Le marché intérieur est limité. Le sous-sol est riche : or, cuivre, molybdène, obsidienne qu'on ramasse au pied d'une montagne. À cette époque, la croissance économique était en constante progression.

Les derniers jours nous avons découvert une région arrosée, plane, prospère, riche de cultures maraîchères et de fruits variés non traités. Les arbres commençaient à prendre les couleurs de l'automne magnifique.

Ce voyage me laisse de beaux souvenirs de ce pays dont le charme mélancolique est immense, et de ses habitants accueillants et aimables. Tout ce qu'il faut pour donner l'envie d'y retourner.

Tatiana Mouromzeff-Saarbekova
Octobre 2003

RENCONTRE INTERCULTURELLE À LA CLÉ

L'association la *CLÉ* (Compter, Lire, Écrire) a été créée par deux enseignantes à la retraite en 1985. Elle a pour objet la dispense de cours et l'accompagnement individuel et gratuit d'adultes français en lecture et en écriture, pour les étrangers en français, pour les jeunes en accompagnement à la scolarité. Elle propose également de la médiation sociale. Elle lutte ainsi contre l'exclusion et pour l'intégration sociale, professionnelle et scolaire des personnes en difficulté, quelque soient leur âge et leur nationalité.

550 bénévoles dispensent ces cours à 600 apprenants chaque année. Cette année, parmi ces derniers, 268 sont de langue étrangère et apprennent le français. Beaucoup d'Arméniens de notre association ont bénéficié, ou bénéficient encore, de ce soutien efficace. C c'est pourquoi lorsque Lilit Askqryqn nous a proposé de participer à une manifestation organisée par cette association pour représenter la culture arménienne, nous avons dit oui tout de suite.

C'est ainsi que le 4 mai 2013, à Lille Moulin, nous avons déballé tous les supports que nous avons réunis dans l'association *Ararat* : livres, gazettes, cartes, exemplaires de l'alphabet, poteries traditionnelles, statuettes, spécialités culinaires… La CLÉ organise cet échange interculturel – « La clé dans tous ses

Photos : Ruzanna Askaryan

Lilit Askaryan (à droite) lors de la rencontre interculturelle à la CLÉ / Լիլիթ Ասկարյանը (աջից) «CLÉ»ում կազմակերպված միջմշակութային հանդիպման ժամանակ

թրիքը մենք անցկացրեցինք երաժշտության ներքո այն ռեստորանում, որտեղ Շառլ Ազնավուրը տոնել էր իր ծննդյան օրը:

Այդ ժամանակ Հայաստանի բնակչության թիվը հասնում էր երեք միլիոն մարդու: Իսկ սփյուռքում ապրում էր մոտ հինգ միլիոն հայ: Արտագաղթը մեծ էր: Բայց այն հայերը, ովքեր արտերկրում հաջողության էին հասել, վերադառնում էին և գեղեցիկ առանձնատներ կառուցում բարեբեր այս երկրում:

Մի օր՝ այցելություններից մեկի ժամանակ, ես շատ զարմացա, երբ լսեցի Նարինեի այս խոսքերը. «Ուշադի՛ր եղեք լուսանկարներ անելիս: Մենք գտնվում ենք սահմանի վրա. թուրքերը մեզ հետևում են»: Էքսկուրսավարը մեզ նաև հիշեցրեց 1988 թ. երկրաշարժի մասին, որի հետևանքները շատ ծանր էին: Ճանապարհորդությունների ընթացքում ամենուրեք մենք հանդիպում էինք շատ կոկիկ հագնված երեխաների. նրանք չէին գնում տոնակատարության, այլ ուղղակի՝ դպրոց:

Հայոց լեզուն ու այբուբենը նման չեն ոչ մի ուրիշ լեզվի և ինձ համար հայերեն հնչյուններն ու տառերը ամբողջովին անծանոթ էին: Ես կարողացա սովորել միայն մի քանի տառ, այն էլ նայելով Արարատի պատկերներով բացիկներին ու տեղական թղթադրամները:

Հայաստանի գլխավոր գործընկերներն են Ռուսաստանն ու Իրանը: Ներքին շուկան սահմանափակ է: Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով՝ ոսկի, պղինձ, մոլիբդեն, օբսիդիան, որը կարելի է հավաքել սարերի ստորոտներից: Այդ ժամանակահատվածում մշտապես արձանագրվում էր տնտեսական աճ:

Վերջին օրերն անձրևային էին, իսկ մեր բացահայտած երկիրը՝ համաչափ, ծաղկուն և հարուստ բանջարանոցային կուլտուրաներով ու բազմատեսակ մրգերով՝ առանց քիմիական մշակման: Ծառերը սկսում էին ստանալ հիասքանչ աշնան գույներ:

Այս ճամփորդությունն ինձ թողել է գեղեցիկ հիշողություններ մի հզոր մելամաղձոտ հմայք ունեցող երկրի ու նրա հյուրընկալ և բարեհամբույր բնակիչների մասին: Եվ սա ցանկություն է առաջացնում կրկին այցելության գնալ այս երկիր:

Տատյանա Մուրոմզեֆֆ-Սաարբեկովա
Հոկտեմբեր, 2003 թ.

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «CLÉ»-ՈՒՄ

«CLÉ» («Հաշվել, Կարդալ, Գրել») հասարակական միությունը ստեղծել են երկու թոշակառու ուսուցիչներ 1985 թ.: Միության նպատակն է կազմակերպել անվճար դասընթացներ և անհատական պարապմունքներ՝ մեծահասակների համար՝ ֆրանսերենի (գրել-կարդալ), արտերկրացիների համար՝ ֆրանսերենի, պատանիների համար՝ դասապատրաստում: Միաժամանակ առաջարկվում է նաև որոշ սոցիալական հարցերի միջնորդություն: Այսպիսով, կազմակերպությունը պայքարում է դժվարության մեջ գտնվող անձանց օտարացման դեմ և նրանց սոցիալական, մասնագիտական և կրթական ինտեգրման համար՝ անկախ տարիքից և ազգային պատկանելությունից:

Ամեն տարի 550 կամավորներ 600 սովորողի համար վարում են այս դասընթացները: Այս տարի ոչ ֆրանսալեզու 268 մարդ հաճախում են ֆրանսերենի դասերին: Մեր միության շատ հայեր օգտվել են կամ էլ դեռ օգտվում են այս արդյունավետ օժանդակությունից: Ահա թե ինչու, երբ Լիլիթն առաջարկեց մասնակցել «CLÉ»-ի կազմակերպած միջոցառմանը, մենք միանգամից համաձայնեցինք ներկայացնել հայկական մշակույթը:

Եվ այսպես 2013 թ. մայիսի 4-ին Լիլ Մուլեն թաղամասում մենք ցուցադրեցինք «Արարատ» միության տրամադրության տակ եղած բոլոր օժանդակ նյութերը՝ գրքեր, թերթեր, քարտեզներ, այբուբենի պլակատներ, ազգային խեցեգործական իրեր, արձանիկներ, ազգային ուտեստներ և այլն: 2003 թ.

états » – tout les deux ans depuis 2003 à partir d'ateliers thématiques : cuisine, arts, créations diverses…

Des Arméniens nouvellement arrivés ont interprétés la récitation d'un poème en français. Nous avons découvert aussi de la cuisine du Maghreb, des peintures d'Indonésie, de la musique africaine…, le tout orchestré par les animateurs salariés de l'association et les apprenants prenant un plaisir manifeste à faire découvrir et partager leur culture aux Français notamment à leurs enseignants bénévoles. Ces derniers étaient nombreux à poser des questions et à évoquer un possible voyage au pays de leur apprenant.

La rencontre a été très agréable et nous serons à coup sûr présents aux prochains échanges de 2015.

Louisette Lamarche

Les tournois 2013 — 2013 թ. մրցաշարերը

Photo: Garik Galstyan

Les vainqueurs du tournoi de nardis court (10 et 17 mars 2013) :
(du gauche à droite) Armen (4e), Sahak (1er), Gagik (2e) et Razmik (3e)
Կարճ նարդու մրցաշարի (2013 թ. մարտի 10-ից՝ 17-ը) հաղթողները՝
Արմենը (4-րդ), Սահակը (1-ին), Գագիկը (2-րդ) և Ռազմիկը (3-րդ)

Ont collaboré avec ce numéro: Garik Galstyan, Louisette Lamarche, Jaqueline Kasparian, Margarit Khatchatryan, Vahé Mournet, Tatiana Mouromzeff, Nelli Papanyan, Pierre Grosbois

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.83.30.88.30, 03.20.64.20.09

Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ________________________________
Adresse ___________________________________
Mail ___________________ Téléphone _____________
Adhère à l'association ARARAT pour l'année 2008/2009
a payé une adhésion de 15 euros (par famille)
(Date et Signature)

ISSN 2117-5772

սկսած երկու տարին մեկ «CLÉ»-ն կազմակերպում է այս միջմշակութային փոխանակումը՝ «CLÉ»ն բոլոր տեսանկյուններից» նշանաբանի ներքո: Դա կատարվում է թեմատիկ խմբակների միջոցով՝ խոհանոց, մշակույթ, տարբեր արհեստներ և այլն:

Վերջերս Ֆրանսիա եկած հայերը ֆրանսերեն ասմունքեցին բանաստեղծություններ: Մենք բացահայտեցինք նաև մագրեբյան խոհանոցը, ինդոնեզիական կերպարվեստը, աֆրիկյան երաժշտությունը… Այս միջոցառումը վարում էին միության հաստիքային աշխատողներն ու սովորողները: Նրանք ակնհայտ հաճույքով էին ֆրանսիացիներին, հատկապես կամավոր ուսուցիչներին, բացահայտում և նրանց փոխանցում իրենց մշակույթը: Հենց ուսուցիչներն էլ տվեցին բազմաթիվ հարցեր: Նրանք նաև առաջարկեցին հետագայում կատարել ճանապարհորդություններ դեպի դասընթացներին ընդգրկված սովորողների երկրները:

Հանդիպումը շատ հաճելի էր: Միանգամից կարող ենք ասել, որ կապահովենք մեր մասնակցությունը հաջորդ՝ 2015 թ. կազմակերպվող նմանատիպ միջոցառմանը:

Լուիզեթ Լամարշ

Photo: Garik Galstyan

Les vainqueurs du tournoi de dominos (10 et 17 mars 2013) :
(du gauche à droite) Mourad (2e), Artur (1er), Atom (4e) et Edouard (3e)
Դոմինոյի մրցաշարի (2013 թ. մարտի 10-ից՝ 17-ը) հաղթողները՝
(ձախից՝ աջ) Մուրադը (2-րդ), Արթուրը (1-ին), Ատոմը (4-րդ) և Էդուարդը (3-րդ)

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝
Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի

Այս համարի հետ համագործակցել են՝
Գարիկ Գալստյանը, Լուիզեթ Լամարշը, Մարգարիտ Խաչատրյանը, Ժակլին Կասպարյանը, Վահե Մուղնեն, Տատյանա Մուրոմզեֆֆը, Նելլի Պապանյանը, Պիեռ Գրոբուան

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.83.30.88.30 և 03.20.64.20.09

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ISSN 2117-5772